ՆՈՐ-ԴԱՐ

№ 141 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ 21 Սեպտեմբերի **1891** Շաբաթ 21 Սեպտեմբերի ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 141

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով 6 րուբլի, երեք ամսով 3 ր. 50 կ., ամսով 1 ր., հատով 5 կոպէկ։ Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գինն 2 կ. բառի համար, ընկերութիւնների համար կրկնապատիկ։

Եկատերինա Գէորգեան և Բարսեղ Սարգսեան Եղիազարեանցները, Եկատերինա Սարգսեան Ալիխանեանցը, Թեկղէ Սարգսեան Տէր-Աստուածատուրեանցը, Մարիամ Սարգսեան Մարգարեանցը ցաւակցութեամբ յայտնելով առաջինն իւր ամուսնու և վերջիններն իրենց եղբօր

ԲԱԽՇԻ ՍԱՐԳՍԵԱՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑԻ

մահուան մասին, խոնարհաբար խնդրում են ազգականներին և ծանօթներին իրենց ներկայութեամբ պատուել հոգեհանգիստը, որ լինելու է շաբաթ օրը, սեպտեմբերի 21-ին, երեկոյեան ժամը 6-ին և յուղարկաւորութեան հանդէսը, որ լինելու է կիրակի օրը, սեպտեմբերի 22-ին, առաւօտեան ժամը 10-ին իւր սեպհական տնից, որ գտնւում է Վելեամինովսկայա փողոցի վրայ № 16, դէպի Մուղնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը կը լինի ս. Կարապետ եկեղեցու գաւթում։

(214) 1—1.

Բալիա Մխիթարեան, Բագրատ և Նիկողայոս Սարգսեան Ստեփանեանցները, Նատալիա Սարգսեանց, Սոֆիա Սարգսեան Ահարոնեանց ցաւօք սրտի յայտնելով՝ առաջինը իւր ամուսնու և վերջինները իրենց հօր

ՍԱՐԳՍԻ ՍՏԵՓԱՆԵԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

մահը՝ խնդրում են ծանօթներին և ազգականներին շնորհ բերել յուղարկաւորութեանը՝ որ լինելու է ամսոյս 21-ին շաբաթ առաւօտեան, 10 ժամին, սեպհական տնից։ Հաւլաբար Պակրովսկայա կազարմի դիմաց, դէպի Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցին։

(213) 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր պարբերական մամուլի դրութիւնը։
Քրոնիկոն.—Լուրեր Հայոց Թատրոնի Դրամատիկների ապահովութիւնը։ Հաշուապահութիւն և հաշուապահներ։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Հեռագիրներ։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

†

Ի Տէր հանգուցեալ Մեծ Իշխանուհի Ալեքսանդրա Գէորգիեւնան յունաց Գէորգ I թագաւորի աղջիկն էր. ծնունդ էր 1870 թուի օգոստոսի 18-ին և 1889 թուի յունիսի 4-ին ամուսնացել էր Թագաւոր Կայսրի Օգոստափառ Եղբօր, նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Պաւէլ Ալեքսանդրովիչի հետ։ 1890 թուի ապրիլի 6-ին Նորին Բարձրութիւններից ծնաւ անդրանիկ աղջիկը՝ Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնան։ Երկրորդ ծննդաբերութիւնը Մեծ Իշխանուհի Ալեքսանդրա Գէորգիեւնային սեպտեմբերի 6-ին ծաղիկ հասակում գերեզման իջեցրեց։

ՄԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Բ.

Նախընթաց համարում մեր պարբերական մամուլի մի պակասաւոր կողմի, հայհոյելու արժանաւորութեան մասին խօսեցինք։ Եթէ թերթի մէջ եղած այդ հայհոյանքը բղխում է մեծ մասամբ մեր կրթութեան, մեր վայելչական զգացմունքի պակասաւորութիւնից, մի ուրիշ նոյնչափ խոշոր պակասութեան սկզբնապատճառը ծածկուած է մեր մի ընդհանուր յատկութեան անձնականութեան, եսականութեան մէջ։ Մեր որոշ կարգի թերթերը շատ անգամ այնպիսի գրուածներով են լցնում իրենց համարները, որ ընթերցողը, եթէ ծայրէ ծայր էլ կարդայ, մի բան չի գտնում, որ բաւականութիւն տայ իւր մտաւոր պահանջներին, և կամ որի մէջ ուսումնասիրուած լինին մեր կեանքի երևոյթները։ Այլ, ընդհակառակն, ինչ որ մեր սովորական նեղ նիւթապաշտ կեանքն է ներկայացնում, իւր մանր անձնական հաշիւներով, չնչին կրքերով, հակառակութիւններով ու կռիւներով, նոյն այդ կեանքն ամբողջապէս, գրեթէ առանց փոփոխութեան պատկերանում է և մեր լրագիրների մէջ։ Թերթերը չեն կարողանում կանգնել իրենց արժանաւորութեան, բարձրութեան վրայ. Նրանք ամեն մի քայլափոխի ենթարկւում են մեր կեանքի ընդհանուր հոսանքին—այնքան զօրեղ է այդ հոսանքը—և ասպարեղ ու խաղալիք են դառնում անձնականութեան ու եսականութեան։ Գովեստ ու պարսաւ ահա թէ ինչն է այդ անձնականութեան հետևանքը, որ և կազմում է մեր թերթերի որոշ մասի բովանդակութիւնը։

Օրինակով խօսենք, որ աւելի հասկանալի լինի։ Թատրոնում խաղում է դերասանը՝ լաւ կամ վատ։ Եթէ այդ դերասանը կամ նրա մտերիմները այն ինչ թերթի խմբագրութեանը բարեկամ ու մօտիկ են, այդ դերասանը ինչքան էլ վատ խաղացած լինի իւր դերը, կարող է հաւանուած լինել, որ քննութեան մէջ նրան անպատճառ պէտք է գովեն. իսկ եթէ բարեկամ չէ, ընդհակառակն՝ պէտք է պարսաւեն։ Երիտասարդի մէկը մի գրքոյկ է հրատարակում և ուղարկում խմբագրութիւններին. ընթերցողը սպասում է այդ գրքի մասին մի քանի անաչառ քննական խօսք կարդալ... բայց ի զուր կլինի նրա սպասելը, քանի որ եթէ գրքի հեղինակը բարեկամ է խմբագրութեանը, նրա գրուածքն ինչքան էլ արժանաւորութիւնից զուրկ լինի, պէտք է գովասանք ընդհանուր խօսքերով գովասանել. իսկ, ընդհակառակն, եթէ հեղինակը լրագրի «մարդը» չէ, այլ մի ուրիշ լրագրի «մարդ» է, նրա գրուածքն ինչքան արժանաւոր լինի, պէտք պարսաւուի։

Այդպէս է մեր խմբագրութիւնների դրութիւնը և, կարծես, նրանց համար այդ դրութիւնը մի անել դրութիւն է, որից չեն կարողանում դուրս գալ։ Ընթերցողներին չխնայելով՝ այդպիսի անձնական հաշիւներով առաջնորդւում են ոչ միայն խմբագրութիւններին մօտիկ անձերը, այլ և հեռուները. ոչ միայն Թիֆլիսում եղողները, այլ և ուրիշ քաղաքներում եղողները։ Ով ում հետ որ և է հաշիւ ունի, այդ հաշիւը, կարծես, անպատճառ պէտք է աշխատի պարզել ու վերջացնել որ և է բարեկամ թերթի միջոցով, և վերջացնել անպատճառ այնպէս, որ իւր դիմացի մարդուն պարսաւած, քամահրած լինի, իսկ իրեն կամ իւր բարեկամին գոված ու բարձրացրած։ Այդ հաշիւների ծնունդն են այն բազմաթիւ նամակները, իրենց երկար ու ձիգ պատասխաններով, որոնք լցնում են մեր յայտնի լրագիրների էջերը, և որոնք ընթերցողների սրտին ու մտքին ոչինչ չմատակարարելուց զատ, պատճառ են լինում կրքերն աւելի գրգռելուն ու յուզելուն։

Այդ անձնական հաշիւներն ի նկատի ունենալով, մեզնում որոշ դասակարգի մարդիկ կան, որ անպատճառ աշխատում են որ և է թերթի բարեկամ լինել, նրա «մարդը» լինել. նրանք լաւ գիտեն, որ եթէ բարեկամ լինին, միշտ տեղ ունին թերթի մէջ և կարող են, մինչև անգամ եթէ խմբագրութիւնն էլ չուզենայ, մեծ ճարպկութեամբ օգտուել թերթի թոյլ կողմից և իրենց կրքերն առաջ խաղացնել։

ՔՐՈՆԻԿՈՆ

Կ. Պոլսում հրատարակուող պարսկերէն «Ախթեր» լրագիրը դադարած էր Պարսկաստանում նրա մուտքն արգելուելու պատճառով։ Այժմ, դեսպան Էսադուլլահ խանի միջնորդութեամբ, «Ախթերը» նորից սկսել է հրատարակուել և նրա մուտքը Պարսկաստանում նորից թոյլ է տրուած։

—

Հռչակաւոր գիտնական Վիրխովի ծննդեան 70 ամեակի առթիւ Կովկասի կայսերական բժշկական ընկերութիւնից ուղարկուող ուղերձը հետևեալ բովանդակութիւնն ունի.

«Ինչպէս կենդանական հիւանդ մարմնակազմութեան ուսումնասիրութեան ասպարիզում նոր մեթոդներ որոշող և [illegible] բանական անդամադննութեամբ, հիւսուածաբանութեամբ և մարդաբանութեամբ վերաբերեալ ամենամեծ հետազօտութիւններով այդ ասպարէզը հարստացնող համաշխարհային գիտնական, դուք մեծ ծառայութիւն մատուցիք մարդկութեանը և համաշխարհային անուն վայելեցիք։ Ինչպէս պրոֆեսոր, դուք իբրև մեծ ուսուցիչ հանդիսացաք բժշկական աշխարհին և վերջնիս մէջ, արդարացի կերպով, բժշկական գիտութեան ամենամեծ լուսատու էք համարւում։ Բժշկականութեան մէջ ձեր աշխատանքների նշանակութիւնը նոյնքան մեծ է, ինչպէս մեծ է և անպարփակելի այն գիտութիւնը, որին դուք նուիրել էք ձեր ամբողջ կեանքը և որին չյոգնելով էք անփոփոխ ծառայել, հասնելով 70 տարեկան հասակի իսկ ձեր անունը յաւէրժացած է բժշկականութեան պատմութեան մէջ։

«Կովկասեան կայսերական բժշկական ընկերութիւնը, որ հաճութիւն ունեցաւ 1881 թուի սեպտեմբերի 20-ի արտակարգ նիստում ձեզ իւր մէջ տեսնելու և որը հպարտանում է նրանով, որ ձեր անունը գրուած է իւր պատուաւոր անդամների ցուցակի մէջ, իւր համար պատիւ է համարում ձեր կեանքի եօթանասնամեակի նշանաւոր օրը իւր յարգանքը յայտնելու ձեզ ձեր, ինչպէս գիտնականի և պրոֆեսորի, հանճարեղ գործունէութեան համար, և հեռաւոր Կովկասից սրտագին շնորհաւորանք բերելով ձեզ նշանաւոր անցքի համար, անկեղծ ցանկութիւն յայտնելու, որ ամբողջ աշխարհի բոլոր բժիշկների համար ձեր թանկագին կեանքը դեռ էլի երկար տարիներ տևի»։

—

Կ. Պոլսում հայերէն տառերով հրատարակուող «Մանզումէի Էֆքեար» լրագիրը օգոստոսի 29-ից անպայման կերպով դադարման է դատապարտուած։

—

Առաջիկայում ծաղիկ հիւանդութեան տարածման դէմն առնելու համար, քաղաքային վարչութեան կարգադրութեամբ, ինչպէս յայտնի է, քաղաքային կեդրոնական բուժարանն և նրա բաժանմունքները ձրի ծաղիկ են պատուաստում թէ երեխաներին և թէ հասակաւորներին։ Քաղաքիս աղքատ դասակարգին խրախուսելու համար, ա-նամաւանդ Ա. Մելքումեանն էլ իւր ծաղկի պատուաստման հիմնարկութեան մէջ (Կուկիայում Ալեքսանդրովսկայա և Նոր Կաթոլիկական փողոցների անկիւնում № 7/9) ձրի հորթի լիմֆա և գլասրին է պատուաստում թէ երեխաներին և թէ հասակաւորներին։

—

Պարսկաստանում քանի տարիներից ի վեր չերամի արտադրութիւնը խիստ պակասած է չերամի որդերի հիւանդութեան պատճառով, մինչդեռ դարերից ի վեր մետաքսը Պարսկաստանի ամենամեծ արդիւնաբերութիւնն է եղած։ Այժմեան չերամի արդիւնաբերութիւնը Պարսկաստանում տարեկան 550,000-ից մինչև 600,000 լիտր է, որի 1/3 մասը նոյն իսկ Պարսկաստանումն է սպառւում։

—

«Рус. Вѣд.»-ի ասելով, հաստատուած է Բաքուի ձիաքարշ երկաթուղիների ակցիոներական ընկերութեան կանոնադրութիւնը։ Ընկերութեան դրամագլուխն է 550,000 ր.։

—

Ստացանք «Տեկոտագիր Աղիսան 10-ի (Թաւանի) վերայ» գրիչից Միքայէլ Ա. Գանջեցեան հրատարակից Սաաք Մանտաշեանցի։ Տետրակը տպուած է սոյն 1891 թուին, Շուշում։

—

ԴՈՒԲԱՑԻՑ.—Այս օրերս կաթողիկոսական ընտրութիւնների համար պատգամաւորների ընտրութեան ժողով կայացաւ տեղիս երկդասեան դպրոցի դահլիճում աւագ քահ. Աւշարեանցի նախագահութեամբ։ Արժ. նախագահը կարդաց Շամախու թեմի սրբազան առաջնորդի թուղթը և բացատրեց պատգամաւորների ընտրութեան եղանակը։ Ընտրուեցան միաձայն հետևեալ երկու ներկայացուցիչները՝ պ. պ. Ներսէս բէկ Սարումեան և բժիշկ Միքայէլ Զալիբեանց։

—

ԲԱԹՈՒՄԻՑ.—Վաղուց է, որ տեղիս մի քանի երիտասարդների մէջ միտք էր յղացել գրադարան-ընթերցարան բանալու։ Դեռ անցեալ տարի այդ նպատակի համար ներկայացում և նուիրատուութիւններ եղան, բայց թէ նուիրատուութիւնից և ներկայացումից որքան գումար գոյացաւ, յայտնի չէ։ Ցաւալի է, որ այդ գեղեցիկ մտադրութիւնն, ինչպէս երևում է, չպէտք է իրականանայ, որովհետև գործն այժմ քնած է։ Բայց թէ որքան անհրաժեշտ է տեղիս հասարակութեան համար գրադարանը, բացատրել հարկաւոր չէ, որովհետև ամեն մարդ գիտէ նրա օգուտները և փափագում է օր առաջ ունենալ մի այդպիսի հիմնարկութիւն։ Թէև տեղս կայ մի գրադարան, որ պատկանում է մի ռուսի, բայց այնտեղ չկան և չեն ստացւում հայերէն գրքեր և լրագրներ. դորա փոխանակ հարուստ է ռուսաց, եւրոպական գրքերով և լրագրներով։ Հետևապէս հայերից մեծ մասը այնտեղից չի օգտւում։ Բաթումի հայերի մեծ մասը կազմում են բանուորները և գործակատարները. գրադարան չլինելու պատճառով կիրակի և տօն օրերին մնում են շուարած թէ ինչ անեն, ճարահատեալ գնում են զանազան սրճարաններ, ճաշարաններ ժամանակ անցկացնելու և զուր տեղը փողեր են կորցնում։ Յոյժ ցանկալի է, որ գործն սկսողները չթողնեն, որ այդ գործը մեռնի. գը-

բաղարան բանալու համար նոյն եռանդով աշխատեն, ինչպէս առաջ։

—Ութն օրից աւելի էր, որ գիշեր և ցերեկ անընդհատ անձրևում էր. դրա պատճառով գործերը կանգնած դրութեան մէջ էին։ Սեպտեմբերի 17-ին երկինքը պարզուեց և գործը նորից սկսուեց։ Ճանապարհները փչացած են անձրևից։ Սեպտեմբերի 17-ին 3 վագոն մշակներ տարան ճանապարհը նորոգելու համար։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

—

Սեպտեմբերի 19-ին հայոց դրամատիքական խումբը տուաւ իւր երրորդ ներկայացումը։ Խաղացին Ալէքսանդր Դիւմայի (որդու) յայտնի «Կամելիազարդ տիկինը», որը որոշ ժամանակից սկսած աւելի հանրածանօթ է դարձել Սարա-Բեռնարի շնորհիւ, որի մէջ հռչակաւոր արտիստը սիրում է փայլեցնել իւր տաղանդը Մարգարիտ Գոտիէի դերում։ Ո՞վ է Մարգարիտ Գոտիէն, այդ կամելիազարդ տիկինը—թեթև բարքի տէր մի կին, մի [illegible], որ շատ հոմանիներ ունի, որ իւր տունը Աստղկան տաճարն է շինել. այդտեղ նա տարփաւոր սիրոյ ու զգուանքի գնով գեղխ ու շռայլ կեանք է անցկացնում, վայելում է աշխարհի քաղցրութիւնները այնպէս՝ ինչպէս ինքն է հասկանում. և չնայելով որ դեռ իւր կեանքում ոչոքի չէ սիրել և ոչ էլ սիրուել է մէկից, այնուամենայնիւ նա իւր հոմանիների հաշուով մեծ պարտքեր է անում, որովհետև հաւատացած է, որ այդ բոլորը կարելի է ծածկել վաճառման գնով։

Բայց աշխարհում ինչեր չէ պատահում. յանկարծ յայտնուել է մի երիտասարդ, ջերմ սիրոյ ու քնքոյշ զգացմունքների տէր, որ սիրահարուել է այս [illegible], այս ժողովրդի աղջկայ վրայ։ Սա Արման Դիւվալն է, մի պատուաւոր ընտանիքի զաւակ։ Բայց նրա խոստովանութիւնը անկեղծ է, խօսքերը սիրաշունչ, հայեացքը սրտագրաւ։ Ո՞ր կինը կարհամարհէ նրա զգացմունքները։ Սակայն Մարգարիտն, իւր բազմաթիւ փորձերից ուսած, ծիծաղում է երիտասարդի խոստովանութեան վրայ, ծաղրում է այդ նորելուկ սիրահարի զգացմունքները... բայց յետոյ ինքն էլ ընկճւում է և առաջին անգամ իւր կեանքում սկսում է սիրել... Այժմ երկու երիտասարդները սիրահարներ են։ Մարգարիտը Արմանից գաղտնի վաճառում է իւր ղըզը, ձիանները, կառքերը, ակնեղէնները, որպէս զի պարտքերը վճարելով հեռանայ Պարիզից մի գիւղ, մի անկիւն, ուր կարողանայ իւր միակ սիրած Արմանի հետ ապրել։ Վերջինս էլ իւր կողմից իւր սիրուհուց ծածուկ միևնոյն պատրաստութիւններն է տեսնում, որպէս զի սիրուհուն պարտքից ազատելով, ազատէ և նրան հոմանիների գրկից։

Գալիս է Մարգարիտի մօտ Արմանի հայր Ժորժ Դիւվալը և բացատրութիւն է պահանջում նրանից իւր որդուն այդպիսի քայլեր անել տալուն համար, կշտամբում և վիրաւորում է նրան ամենաանարգ խօսքերով։ Մարգարիտը պաշտպանում է իւր արժանապատուութիւնը... ապացուցանում է, որ ինքը չէ խնդրել Արմանին նիւթական որ և է մի զոհաբերութիւն անելու և թէ իւր պարտքերը վճարելու համար միայն ինքն է հոգում։ Ժորժ Դիւվալը հաւատալով ճշմարտութեանը, համակրում է իւր առաջ կանգնած անարատ և վշտահար կնոջ անկեղծ զգացմունքներին։ Սակայն այդ համակրութիւնը չէ արգելում նրան ամենամեծ զոհաբերութիւն պահանջելու Մարգարիտից։ Նա պատմում է, որ ինքը ազնիւ և պատուաւոր ընտանիքի հայր է, որ ինքը Արմանից զատ ունի և մի անմեղ ու անարատ աղջիկ, որ սիրում է մի պատուաւոր ընտանիքի անդամ եղող երիտասարդի, որի իրեն փեսայանալը իւր աղջկայ ապագայ բաղդըն ու երջանկութիւնն է. սակայն եթէ Արմանը իրեն, այդ անուանարկ Մարգարիտի հետ շարունակէ ապրել, իւր աղջիկը կը դժբաղդանայ, որովհետև [illegible]պատուաւոր փեսացուն չի համաձայնուել անպատիւ կեանք վարող եղբօր քրոջ հետ ամուսնանալ։ Հետևապէս Ժորժ Դիւվալը խնդրում է Մարգարիտին, որ հենց ի սէր Արմանի չդժբաղդացնէ նրա անմեղ քրոջը, ուրեմն հեռանայ Արմանից և կամ հեռացնէ նրան իրենից։

Բանաստեղծների հաշուով սա մեծ անձնուիրութիւն է, իսկ նոր սիրել սկըսողների համար ամենածանր զոհաբերութիւն։ Սակայն, չնայելով դրան, Մարգարիտը որոշում է զոհել իւր զգացմունքը, սպանել իւր սէրը, դժբաղդացնել իրեն՝ մի ուրիշին երջանիկ անելու համար... և այս բոլորը երևի այն պատճառով, որ Արմանի հայրն է պահանջում... Ինչ որ է, հաւատանք հեղինակին և համոզուենք մի վայրկեան, որ այդպիսի գերազանց առաքինութիւնները կարող են թագնուել պարիզական կոկոտների սրտում... Եւ ահա կը տեսնենք։ որ Մարգարիտը նամակ է գրում Արմանին, յայտնում է նրան, որ ինքը ուրիշին է սիրում և խնդրում է այլ ևս իւր մօտ չգնալ։

Արմանը յուսահատուած հեռանում է Պարիզից։

Մարգարիտն, իւր խօսքը ճշմարիտ երևեցնելու՝ համար՝ նախկին կեանքին է վերադառնում։ Բայց որովհետև վաղուց արդէն նա բարակացաւով բռնուած է լինում, իսկ իւր վշտերը աւելի ոյժ են տալիս այդ հիւանդութեանը՝ շուտով նա անկողին է մտնում։

Արման Դիւվալը վերջ ի վերջոյ ճըշմարտութեանը հասու լինելով, վերադառնում է իւր սիրուհու մօտ, բայց նրան արդէն հանգած և մերձիմահ է գտնում։ Մի քանի ջերմ խօսքեր, մի քանի բացականչութիւններ—և Մարգարիտը մեռնում է Արմանի կռների վրայ։

Ահա պիեսի համառօտ բովանդակութիւնը։ Մեր ժողովրդի մեծագոյն մասի համար տակաւին անհասկանալի է այն միջնոլորտը, որի մէջ պտոյտ են գալիս պիեսի հերոսները,մինչդեռ ֆրանսիական կեանքի համար նա հին անցեալ է։ Բաղդաւոր կը լինէինք, ի հարկէ, եթէ նա երբեք էլ ներկայ չդառնար մեզ համար։ Այդ պատճառով իրաւունք էլ չունինք ասելու, թէ հայոց բեմի վրայ հանելու համար նա երբ և իցէ կարող է յարմար պիես համարուել, բացի, ի հարկէ, այն դէպքերը, երբ մի նշանաւոր հայ արտիստ կը կամենայ այդ պիեսով իւր տաղանդը չափել։

Գալով պիեսի գեղարուեստական արժանաւորութեանը՝ մենք կարծում ենք, սիրոյ սրբութիւնը ըմբռնող թատերագրի համար անհասկանալի պիտի լինի այն գիւտը, որ արել է Դիւման, որոնելով սիրոյ ծաղիկը ապականութեան աղմի մէջ։ Եթէ իրաւ է, որ առաքինութեան հետ լծորդուած գեղեցկութիւնն է միայն սուրբ սէր ծնեցնում, ապա ուրեմն անհերքելի է և այն, որ անբարոյականութիւնը սպանում է այդ ծնունդը։

Սակայն Դիւմայի ստեղծագործութեան մէջ երևան է եկել մի սիրտ, որ թէ անբարոյականութեան թշնամի է և թէ նրա ապականութեան մէջ բուսած ծաղիկներից է իւր սիրոյ պսակը հիւսում։ Եթէ սա անբնական երևոյթ է, սակայն այն առածն էլ հին է, թէ «ճաշակի վրայ չեն վիճում»։

Բայց դառնանք մեր դերակատարներին։

Չնայելով որ պիեսի մէջ մասնակցում են 16 հոգուց աւելի, սակայն բոլոր գործողութիւնը պտոյտ է գալիս երեք գըլխաւոր անձինքների, այն է Մարգարիտ Արման Դիւվալի և Ժօրժ Դիւվալի շուրջ։

Մարգարիտի դերը կատարում էր Սիրանոյշը, Արման-Դիւվալինը՝ պ. Աբելեանը, իսկ Ժօրժ Դիւվալինը պ. Պետրոսեանը։

Տիկին Սիրանոյշն առաջին և երկրորդ արարուածի մէջ եթէ թոյլ չասենք՝ միջակ էր։ Այն տեղերում, ուր նա իրեն ներկայացնում է սիրոյ և քնքոյշ զգացմունքների վրայ ծիծաղող մի կոկոտ, նրա միմիկան և առոգանութիւնը հակառակ ծայրեր էին ներկայացնում. նրա ժպիտը արտայայտում էր ծաղր և արհամարհանք, իսկ ձայնը՝ սրտաշարժ զգացում։ Այն տեղ, ուր նա իրեն անփոյթ ու անհոգ ձևացնելով ուզում էր ուրախանալ, պարել, զուարճանալ, իւր սրտի զգացմունքը յանձնում էր ձեռքերին, որոնք անտեղի շարժումներ էին անում օդի մէջ։

Բայց երրորդ արարուածի մէջ, Արմանի հօր, Ժորժ Դիւվալի հետ եղած տեսարանում, տիկինը անհամեմատ գեղեցիկ խաղաց։ Ժորժ Դիւվալից ստացած վիրաւորանքի զգացման արտայայտութիւնը, իւր բացատրութիւններ տալու եղանակը, Դիւվալի վերջին առաջարկութիւնը լսելու ժամանակ զգացած վշտի արտայայտութիւնը և այլն օրինակելի էին։ Չորրորդ արարուածում նոյնպէս թոյլ էր. իսկ վերջին արարուածում, բարակացաւից տանջուած ու նիհարած մարմնի և վշտերի ներքոյ ճընշուած հոգու մէջ նրա խաղը խիստ բընական և սրտաշարժ էր։ Իսկ այն տեսարանը, երբ նա իւր սիրած Արմանին տեսնելով՝ ընկնում է նրա գիրկը, իսկ այդ գրկախառնութիւնից յետոյ նրա իւր սիրահարին ողջագուրելը, փայփայելը, նրա մահամերձ դէմքի սիրաղեկումները՝ աւելի քան գեղեցիկ էին։ Մի փոքր անբնական թուաց մահուանից մի քանի րոպէ առաջ անկողնից յանկարծ դուրս թռչելը, որովհետև դրա մէջ նա չափ չպահպանեց, բայց դրա փոխարէն նրա սառած և հետզհետէ հանգչող հայեացքը, որի վըրայ կարծես նոյն ինքը մահն էր ծանրանում, սրտաշարժ և գեղեցիկ էր։

Պ. Աբելեանը, որ կատարում էր Արման-Դիւվալի, ուրեմն սիրահար երիտասարդի սանտիմենտալ դերը, չափազանց թոյլ էր։ Ինչու համար էր նա յանձն առել այդ իւր ուժից վեր և ունեցած բեմական ընդունակութիւններին անհամապատասխան դերը, չկարողացանք հասկանալ։ Երկուսից մէկը՝ այդ դերը նրան յանձնողը կամ իրեն պ. Աբելեանին է ուզեցել ծաղրել կամ հասարակութեանը, որովհետև Արման Դիւվալի դերում հանգուցեալ Ադամեանից յետոյ պ. Աբելեանին տեսնելը, աւելի քան ծիծաղելի է։ Եթէ յարգելի մամուլը անուշադիր է գտնուել դէպի պարոնը, ինքը տ. Սիրանուշը պիտի խորհուրդ տար նրան հրաժարուել այդ դերից, որովհետև շատ տեղերում պարոնի վատ խաղալը՝ տիկնոջ խաղի առաջ տպաւորութիւնն էլ կորցնում էր։ Այն տեսարաններում, որոնց մէջ Արմանը ջերմ սիրոյ արտայայտիչ գողտրիկ ու քնքոյշ խօսքեր պիտի ասէ, պ. Աբելեանը իւր անարուեստ ձևերով, գաւառական միմիկայով և ձայնի անհարթութեամբ միայն ծիծաղ էր յարուցանում։ Եթէ տ. Սիրանուշի խաղը մի քանի տեղերում թոյլ և առանց տպաւորութեան անցաւ, այդ նա պարտական է պ. Աբելեանին, որի խաղը ընդհանրապէս կրխիկայից սառը էր։

Երրորդ տեսարանի մէջ, ընդհանրապէս, տիկնոջ խաղը ամենալաւ տպաւորութիւն արեց նրա համար, որ իւր դիմացինի, Ժորժ Դիւվալի, դերում պ. Պետրոսեանն էր։ Պարոնի դերը թէպէտ շատ մեծ չէր, բայց հենց այդ փոքրիկ դերը նա այնքան բնական և շնորհքով խաղաց, որ աւելին սպասելը շռայլութիւն կլինէր։ Նրա ոչ միայն շարժուածքի մէջ, այլ և ձայնի ելևէջներում գեղեցիկ համաչափութիւն և արուեստ կար։ Վերջին տեսարանում միայն, երբ նա յուզուած էր, դարձեալ մի փոքր սկսեց երգելով խօսել, բայց այդ արգելք չեղաւ, որ հասարակութիւնը բուռն ծափահարութեամբ բեմ չկանչէր նրան մի քանի անգամ։

Մոռացանք ասել, որ Արման Դիւվալի դերը մեր այժմեան ոյժերի մէջ դարձեալ պ. Աղայեանը կարող էր պատուով տանել. ինչու նրան չէին յանձնել, այդ էլ չիմացանք։

Միւս երկրորդական դերերի մէջ աչքի էր ընկնում այս անգամ տ. Մելիքեանը։ Երևում է, որ նա ուշադրութեան է առնում իւր մասին եղած նկատողութիւնները և ուղղում է իւր թերութիւնները։ Սա լաւ նշան է։ Նա ուրեմն ձգտում է առաջ գնալու։

՚Ի վերջոյ կարևոր ենք համարում յիշել պ. Արմենեանին (Արմէն Իփիկեան), Պոլսից մեզ հիւր եկած մի երիտասարդ թատերասէրին, որ ոչ մի բեմի վրայ խաղացած չլինելով Կամելիազարդ տիկնոջ մէջ Գաստոն Ռիօի փոքրիկ դերն էր յանձն առել կատարելու։ Այդ թեթև փորձի մէջ նա այնքան շնորհք ցոյց տուաւ, որ կարելի է համարձակ գուշակել թէ նա մի օր լաւ դերասան պիտի լինի։ Բաւական է որ պարոնը իւր սիրած արուեստը ուշի ուշով ուսումնասիրէ։

Այս ներկայացման թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր։

Հ.

ԳՐԱԳԷՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ *)

—

Հասկանալի է, որ այսպիսի հանգամանքներում մեր գրագէտների վիճակն էլ բոլորովին անապահով կլինի—նրանք իրենց աշխատանքի վարձատրութիւնը չեն ստանում. գրականութեամբ զբաղուողը պէտք է միջոցներ ունենայ ապրելու։ Բայց մեզանում գրագէտների դասն էլ գլխաւորապէս չքաւոր ծնողների որդիներանցից է կազմուած։ Ուրեմն ինչ միջոց կայ գոնէ մասամբ թեթևացնելու գրագէտների վիճակը—եթէ ոչ փոխադարձ օգնութիւնը։

Զարմանալի չէ, որ մամուլն ամեն օր նորանոր հարցեր է զարթեցնում, գործակատարների վիճակը թեթևացնելու մասին գրում, փոխադարձ օգնութեան ընկերութիւն հաստատել կամ փոխատու-խնայողական դրամարկղ հիմնել առաջարկում, — բայց միևնոյն ժամանակ մոռանում է իւր դասակարգի մարդկանց դրութիւնը.... Ի՞նչ հանելուկ է սա։

Այդ կողմից էլ Եւրոպական քաղաքակիրթ ազգերը մեզ օրինակ լինին։ Ներկայումս այդ բոլոր երկրներում կան ընկերութիւններ, զանազան հաստատութիւններ, որոնք նպատակ ունին գրագէտների վիճակը բարւոքելու։ Իսկ այդ ընկերութիւններից ոմանք սկսուել են այնպիսի անաջող հանգամանքներում, երբ գրագէտները ամենախիստ հալածանքների էին ենթակայ, աղքատութեան մէջ մեռնում էին։ Ահա օրինակ Անգլիայի «գրականական ֆոնդը», որ անցեալ տարուայ մայիսին իւր հարիւր ամեակը տօնեց և այդ առթիւ կազմեց մի բանկետ ամեն կարգի գրագէտներից, որոնց նախագահում էր Ուէլսի պրինցը։ Հետաքրքիր է նախագահի ճառը, ուստի թող աւելորդ չլինի այդ ճառի մի մասն առաջ բերել։

Ուէլսի պրինցը բարձրանալով իւր նախագահական աթոռից, բաժակ առաջարկեց «Գրականական ֆոնդի» աջողութեանը և խօսեց իւր ճառը, որի մէջ ցոյց տալով ընկերութեան կրած նեղութիւններն ու գրագէտների վիճակի վատթարութիւնը, շարունակեց. «Անցան այն ժամանակները—ասաց նա ի միջի այլոց,—երբ գրագէտների գոյութիւնը հըզօրների հովանաւորութիւնից կախումն ունէր։ Կրթութիւնն իւր անկիւն առնում է և այժմ հեղինակներն իրենց առաջ անհատական պատրոնների (հովանաւորների) փոխանակ ընդարձակ հասարակութիւն ունին, բայց սոյն ընկերութեան գոյութիւնն այժմ էլ նոյնքան հարկաւոր է, ինչքան, դրա կազմուելու միջոցին։ Թէև կարճ միջոցում գրագիտութիւնն համարեա իւրաքանչիւր անհատի սեպհականութիւն դարձաւ, բայց գրականական արհեստը միշտ ապահով է մնալու։ Նիւթական վարձատրութիւնն առաջուայ նման այժմ էլ անհաւասար է բաժանւում և չափազանց անորոշ է. Դա մեծ մասամբ բաժին է ընկնում, այսպէս ասած, թեթև գրականութեան։ Գրականական լուրջ արտադրութիւններն առևտրական շատ քիչ աջողութիւն ունին։ Այն գիրքը, որ գուցէ ամբողջ տարիների անընդհատ աշխատանքի ու լարուած մտքի արդիւնք է եղել, շատ անգամ ամենաչնչին վարձատրութիւն է տալիս։ Ի հարկ է ապագայ սերունդները կ՚գնահատեն այդ գիրքը, բայց մարդս դրանով լոկ չէ կարող ապրել, ինչպէս չէ կարող փառքով միայն ապրել։ Գրագէտը կարող է ընկճուել աշխատանքի ծանրութիւնից՝ ծերութեան կամ հիւանդութեան միջոցին բոլորովին ապահովութիւնից զրկուած, և այն՝ բոլորովին իրենից անկախ՝ բոլորովին անմեղ տեղը։ Եւ ահա այդտեղ օգնութեան է հասնում այս ընկերութիւնը։ Մի մարդ, որ պարապում է մի որ և իցէ գործնական կանոնաւոր արհեստով, կարող է իւր աշխատանքին շահաւոր ու կանոնաւոր գործադրութիւն տալ, բայց գրականական պարապմունքը մի այնպիսի կանոնաւորութիւն չունի, որ հնարաւոր լինի հոգեպահուստի մասին մտածել։ Առևտրական ճգնաժամների միջոցին առաջինը նրանք են զգում դրա ծանրութիւնը,—երբ մի որ և իցէ ընտանիք ստիպուած է լինում տնտեսութիւն անելու, նա սկսում է գիրք չգնելու, որովհետև աւելի յարմար է գտնում նախ դրանից զրկուելու.... Շատ անգամ, երբ գրագէտն աղքատանում է, ասում են, որ մեղաւորն ինքն է, որ կանխատեսութեամբ չըվարուեց։ Բայց դա անիրաւութիւն է, այդ ասողները մոռանում են, թէ որքան չնչին է նրա աշխատանքը։ Լաւ փաստաբանը կամ ճարպիկ բժիշկը կարող է լաւ եկամուտ ունենալ, մինչդեռ լաւ գըրագէտի եկամուտը, դրանց հետ համեմատած, շատ չնչին բան է։ Նրա ստացած վարձատրութիւնը չնչին է, բացի մի քանի գլխաւորներից, բայց այդ գլխաւորներում չէ հարկաւոր ձեր օգնութիւնը։ Դուք կոչուած էք նեցուկ լինելու նրանց, որոնք ընկճւում են կռուի մէջ, որոնք առանց ձեր օգնութեան պէտք է աղքատանային։ Նրանք արժանի են այդ օգնութեան, որովհետև աշխատել են ուրիշների համար, աշխատել են մարդկային մտքի զարգացման մեծ ասպարիզում»։

Եթէ դեռ զարգացած Անգլիան այսպէս է, հապա մենք ինչ պիտի լինինք։ Մեզանում դեռ և յիշեալ ճառի մէջ յիշուած «թեթև գրականութիւն» էլ բոլորովին անապահով է—ապացոյց մեր վիպասանները, որոնցից ոմանք աղքատութեան մէջ մեռան, ոմանք ուսուցչութեամբ են օրական հաց ճարում, ոմանք բոլորովին ասպարէզից հեռացած ու հաշուապահութեամբ կամ այլ միջոցներով են ապրուստ գտնում... Հետաքրքիր է յիշեալ ընկերութեան հիմնարկութեան պատմութիւնը։

Անգլիայում գրականութիւնը շատ վաղ զարգացաւ, բնական է, որ գրագէտների ապահովութեան խնդիրն էլ շատ վաղ զարթնէր այնտեղ։ Դեռ անցեալ դարի առաջին կէսերում զգացւում էր դրա կարևորութիւնը, բայց դրական առաջարկի ձև առաջին անգամ ստացաւ 1773 թուին, Լոնդոնի տաւերներից մէնում, ուր այն ժամանակուայ գրագէտները սովորութիւն էին արել հաւաքուելու՝ գրականական և գիտական խնդիրների մասին խորհրդածելու համար։ Առաջարկողն էր Դանիէլ Վիլիամսը։ Բայց այն ժամանակ այդ միտքը

*) Տես «Նոր-Դար» № 140.

չատ կասկածանքներ յարոյց։ Նոյն իսկ Բենիամին Ֆրանկլինը, որ մասնակցում էր այդ խմբին, անհնարին էր համարում այդ առաջարկի իրագործուելը, քանի որ, նրա կարծիքով, հասարակութիւնը չէր օգնելու դրան՝ որքան էլ դա համակրելի միտք լինէր։ Եւ յիրաւի, չնայելով Դ. Վիլիամսի գործած բոլոր ջանքերին ու եռանդին, երկար ժամանակ այդ միտքն անհնար եղաւ իրագործել. դա անիրագործելի էր թւում մինչև անգամ այնպիսի մարդկանց, ինչպէս էին Ֆոկսը, Էդմունդ Բեօրկը, որոնք կրկնում էին Ֆրանկլինի ասածները։

Սակայն Վիլիամսը հետևում էր իր ծրագրին իրագործելու և, վերջապէս, 1788 թուին այդ գաղափարը իրականանալու մօտ էր մի եղերական դիպուածի պատճառով, որը խիստ մեծ տպաւորութիւն էր գործել հասարակութեան վրայ,— այդ թուին բանտի մէջ մեռաւ յայտնի գրող Գլօուերը, որ մեծ հռչակ էր ստացել Պլատոնի փիլիսոփայութեան մասին գրած հեղինակութիւններով, բանտ էր ձգուած, վերին աստիճանի աղքատութեան պատճառով՝ իր պարտքը վճարելու անկարող լինելուն համար։

Ահա այս դէպքը մեծ զարկ տուեց Վիլիամսի մտքի իրագործուելու աջողութեանը և վերջապէս, երկար աշխատութիւնից յետոյ, ընկերութիւնը հաստատուեց և 1790 թ. մայիսին իր առաջին նիստն ունեցաւ, ընկերութիւնն աստիճան առ աստիճան զարգանալով, սկսեց ընդհանուրի համակրութիւնն ու դիրք ունեցող անձերի հովանաւորութիւնը վաստակել։ Մինչև անգամ Գէորգ IV թագաւորը սկսեց օգնել նրան դեռ իր թագաժառանգ եղած միջոցին, իսկ յետոյ էլ թագաւորութեան ժամանակ մօտ 6,000 ֆունտ ստերլինգ նըպաստ տուաւ, որ մեր փողով 60,000 ր. է անում։ Իսկ Վիլհելմ IV թագաւորը դարձաւ ընկերութեան պատրոնը։ Միևնոյն կոչումն ունի նաև ներկայ Վիկտորիա թագուհին, որ անդադար դրամական օժանդակութիւններ է տալիս։

Այժմ «գրականական ֆոնդը» մեծ հեղինակութիւն ունի Անգլիայում և իւրաքանչիւր տարի բանկետներ է սարքում Լոնդոնում, որոնցից մեծ եկամուտ է ունենում։ Անցեալ տարուայ բանկետին, օրինակ, 40,000 ր. նուէր էր ստացուած միայն։

Ընկերութիւնն իր հիմնուելու օրից, այսինքն 100 տարուայ ընթացքում գրագէտներին օգնութիւն է տուել մօտ 110,000 ֆունտ ստերլինգ, այսինքն մօտ 1,000,000 րուբլի։

Ինչ ասել կուզէ, որ այդ մի ընկերութիւնը միակը չէ Անգլիայում, ինչպէս նաև ուրիշ փոքր ի չատէ կրթուած երկրներում, ինչպէս օրինակ Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսիայում, Աւստրիայում և այլն, որոնց բոլորի նպատակն էլ գլխաւորապէս մէկ է—ապահովել մտաւոր աշխատողների վիճակը՝ նրանց համար աւելի անկախ կացութիւն ստեղծելով։

Միհրան

(Վերջը միւս անգամ)

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՇՈՒԱՊԱՀՆԵՐ.

—

Ամեն բանով ետ ենք մնացել լուսաւոր աշխարհից. այդ աչքի է ընկնում և զգալի է մեր ժամանակի առեւտրականութեան մէջ. մեզանում առեւտուրն իր ամեն ճիւղերի մէջ դեռ ևս նահապետականութեան դրոշմ է կրում իր վրայ։ Առեւտրականութիւն, եւրոպական մտքով, բնաւ չունինք (մենք խօսում ենք գլխաւորապէս գաւառների մասին) այլ չարչիութիւն, վաճառականութիւն իր փտած, կեղտոտ, պարսկական ձևերով,— ահա Անդրկովկասի արդի վաճառականութեան դրութիւնը մեր տեսակէտից։

Մինչև այժմ զանազան ժամանակներում շատերը յօդուածներ են նուիրել մեր պարբերական մամուլի մէջ առեւտրական չարաբախտ խնդրին, սակայն այդ խնդիրը դէթ մի քայլով իրագործութեան մօտեցած չէ։ Վերցնենք հաշուապահութիւնը, որ առեւտրականութեան նպաստող տարրերներից մինն է և ոչ միայն վաճառականական աշխարհում անհրաժեշտ առարկայ, այլ և իւրաքանչիւր մարդու առօրեայ կեանքի մէջ պէտքական։ Մի դեռ ևս յայտնի չէ, որ Թիֆլիսի առաջնակարգ դրասենեակները, և խանութները հաշուապահներ ունին, բայց երկրորդական խանութպանները բնաւ չունին։ Անդրկովկասի նահանգական և գաւառական քաղաքներում, բացի Բագուից, մատների վրայ կարելի է համարել հետ և անհմուտ հաշուապահներին։ Առհասարակ մեր երկիրը զուրկ է այն ամենից, ինչ որ հարկաւոր է կանոնաւոր առեւտրի համար (չենք խօսում արդիւնագործութեան և երկրի բերքերի արտահանութեան մասին՝ քանի որ այդպիսին համարեա չունինք)։ Կովկասցիք ընդհանրապէս տակաւին չեն զգում առեւտրական գիտութիւններով օժտուած վաճառականների բացակայութիւնն իրենց մէջ։ Դրան պարզ ապացոյց կարող է լինել առօրեայ կեանքն և այն հանգամանքը, որ Կովկասը չունի մի առեւտրական ճեմարան կամ գոնէ դպրոց։ Նոր նոր Թիֆլիսը իր քաղաքային խորհրդով մտածում է և ցանկանում է հիմնել մի այդպիսի ուսումնարան, որի բացուելուն, ի հարկէ, ուրախ կլինին երկրի բնակիչները։ Թիֆլիսի լրագիրներում մի ժամանակ գրուեցաւ, որ այդ նպատակով բաւական գումար կայ ժողոված։ Մենք մեծ յոյս ունենք հիմնուելի առեւտրական դպրոցի աջողութեան մասին և կատարեալ համոզուած ենք վերաբերում դէպի նրա ապագան և օգուտը երկրի համար։ Անհամբեր սպասենք, որ այդ ցանկալի արդիւնաւէտ ուսումնարանը որքան կարելի է շուտ բացուի։ Առեւտրական ասպարիզին նպաստաւոր կարող են ներկայանալ պ. Ստեփան Մանուէլեանի Թիֆլիսում հիմնած առեւտրական կուրսերը։ Թէ որչափ գովելի նպատակ ունեն կուրսերը, այդ ամենին յայտնի է, Պ. Մանուէլեանի մօտ աւարտած հաշուապահները մեր երկրում բաւական յարգանք են վայելում, իբրև իրենց գործը լաւ գիտցող, պարտաճանաչ հաշուապահներ. այդ քիչ բան չէ։ Կուրսերի 9 տարուայ գոյութեան ընթացքում աւարտել են 200-ի չափ հաշուապահներ. այդ ուրախալի երևոյթ է։

Մեր կարծիքով, կուրսերում ուսանելու վճարը փոքր ինչ չատ է. այդ պարագան արգելք է դառնում չատերին կուրսերը լսելու։ Նոյն իսկ լսողներից ոչ աննշան թիւը դժուարանում է վճարել, և վճարում են ճարահատեալ։ Պ. Մանուէլեանն այդ աչքի առաջ պէտք է ունենայ։ Առեւտրական կուրսերի ծրագրում մի անհրաժեշտ բան չկայ,—այդ առեւտրական աշխարհագրութիւնն է։ Ցանկալի է, որ պ. Մանուէլեանը մտցնէր իր ծրագրում այդ առարկան ևս։

Մի քանի տարի առաջ պ. Աւետիս Արասխանեանը Թիֆլիսում հիմնել էր երեկոյեան կուրսեր 2 տարուայ դասընթացքով։ Որքան յիշում ենք ծրագիրը և կողմնակի կերպով լսած ու կարդացած ենք, նրա կուրսերը գեղեցիկ, օգտակար հիմնարկութիւն էին կազմում։ Բայց, չարաբախտաբար, նրանք բնաւ կեանք չունեցան։ Պ. Արասխանեանի կուրսերի ծրագիրը պ. Մանուէլեանի կուրսերի ծրագրից աւելի բազմակողմանի ու ընդարձակ էր։ Բացի այդ, պ. Արասխանեանի ծրագրած կուրսերում պիտի դասախօսէին այն առարկաներից գլխաւորապէս, որ անհրաժեշտ են մի երկրի արդիւնաբերութեան մշակութեան ու զարգացման համար։ Եթէ հիմնարկութիւնը աջողութիւն ունենար, երկրիս չատ տնտեսական խնդիրներ լուծումն կգտնէին։ Սակայն այս օրինակ արդիւնաւէտ հիմնարկութեան չաջողուելը ցոյց չէ տալիս արդեօք, որ մենք առհասարակ պատրաստուած չենք, որ մենք տակաւին չենք հասկանում թէ նիւթական և թէ բարոյական չահերը։

Վերջին ժամանակներս հիմնուեցան էլի նոր կուրսեր հաշուապահութեան,— պ. Բրենների կուրսերը։ Կուրսերի այցելողները սահմանափակ թիւ են կազմում, —մօտ 10 հոգի։ Կուրսերը 2 ամսուայ դասընթաց ունին և 40 ր. է վճարը, որ բաւական էժան է թւում առաջին հայեացքից։ Սակայն չգիտենք օրինաւոր վկայագիր արւում է լսողներին թէ ոչ և որչափ օգտակար կերպով է աւանդում իր առարկան պ. Բրենները։ Շուտով, որպէս տեղական լրագիրներում յայտարարուեց, պ. Բրենները բանալու է կիրակնօրեայ դպրոց, ուր նա ձրիաբար դասախօսելու է հաշուապահութիւն, կարծեօք, այն երիտասարդներին, որոնք տարին ծառայող են խանութներում, և գործակատարներին, որոնք ամսական 20 րուբլուց պակաս են ստանում։ Դեռ բիչ տեղեկութիւն ունինք այդ ձրի դըպրոցի մասին, բայց պ. Բրենների դիտաւորութիւնը գեղեցիկ և օգտակար դիտաւորութիւն է։

Չքաւոր երիտասարդներին աւելի ձեռնտու է մասնաւոր կերպով լաւ հաշուապահների մօտ սովորել, որովհետև և չուտ կարելի է անցնել առարկան և էժան։

Չնայելով հաշուապահների փոքր թուին, համեմատած վաճառականների առաջին բազմութեան հետ, չատերը էլի տեղ, պաչտօն չեն գտնում։ Հարկաւ, երբ տէրութեան հրատարակած որոշ օրէնքները վաճառականների վերաբերմամբ գործադրութիւն և ոյժ ստանան, հաշուապահներն անպաշտօն չեն մնալ։ Այդ օրէնքի զօրութեամբ և 2-րդ կարգի վաճառականները պարտաւոր են հաշուապահներ ունենալ, կանոնաւոր, օրինական հաշուետումարներ պահելու համար։

Այսպէս թէ այնպէս վերջացնելով սոյն յօդուածը, մենք չենք կարող չշեշտել այն հանգամանքի վրայ, որ մեր երկրի սեպհական արդիւնաբերութիւնները պիտի մշակել. դրա համար անհրաժեշտ են մեզ գործարանատէրեր առեւտրական գիտութիւնների հետ ծանօթ, և ընդհանրապէս կրթուած, զարգացած վաճառականներ։ Հակառակ դէպքում մեր երկրի տնտեսական, նիւթական դրութիւնը երբէք չի բարւոքուիլ, ասել է, որ և բարոյական, մտաւոր մակերեյթը չի բարձրանալ։ Սակայն առ այժմ դէթ պէտք է ունենալ ՚արդիւնագործական և կամ գիւղատնտեսական դպրոցներ։

Ա. Եղիգար

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ.—Այս օրերս «Polit. Corresp.» լրագրում Բեռլինից մի կիսապաշտօնական նամակ է հրատարակուած, որի մէջ արտայայտած է ներկայումս Բեռլինի քաղաքական չրջաններում միջազգային դրութեան վրայ ունեցած հայեացքը։ «Այստեղ բոլորովին տրամադիր չեն աննշան իրողութիւն համարելու քաղաքական այն աջողութիւնը, որ մօտերքս ունեցաւ Ռուսիան Դարդանէլի խնդրի վերաբերմամբ։ Աւելի չատ ենթադրում են, որ Ռուսիայի Կ. Պոլսում արած վերջին ջանքերը, որոնց անկասկած, օգնում էր Ֆրանսիան, այն նշանակութիւնն ունին, որ ներկայումս այդ իրար հետ բարեկամացած երկու պետութիւնները ուզում են սկիզբ տալ արևելեան խնդրի յարուցանելուն։ Ռուսներն այժմ խիստ խելացի են վարուել, որ իրենց քաղաքական նպատակների համար այդ խնդիրըն են իրենց համար յենակէտ ընտրել. Նրանք այնպէս են հաշւում, որ կարող են հանգիստ կերպով ոտքները ամուր պահել Փոքր Ասիայում, քանի որ Բուլղարիայից այլ ևս ոչինչ յոյս չկայ։ Ուստի նրանք պէտք է բաւականանան միայն դիտելով, թէ ինչպէս Բուլղարիան իր խելացի կառավարիչների չնորհիւ չարունակ զարգանում է։ Նշմարելու արժանի է, որ այն բոլոր լուրերը, որ իբր թէ Բուլղարիան ձգտում է իրեն անկախ ճանաչելու վրայ, դուրս են գալիս Ֆրանսիայից կամ Ռուսիայից։ Ռուսներն և Ֆրանսիացիները չատ են ցանկանում, որ Բուլղարական կառավարիչները մի որ և է անմտածած քայլ անեն և այդպիսով իրենց վարկը ձգեն իրենց բարեկամ պետութիւնների առաջ և նրանց հեռացնեն իրենցից»։

ԻՏԱԼԻԱ.—Իտալական մինիստր-նախագահ դի-Ռուդինին, Միլանի «Secolo» լրագրի աշխատակիցներից մէկի հետ խօսակցութիւն ունենալով, ասել է, որ ռուս-ֆրանսիական բարեկամութիւնը խաղաղ նպատակ ունի և բոլորովին այն երկիւղը չէ ազդում, որ վերագրում են նրան Լոնդոնի լրագիրները։ Մարկիզ դի-Ռուդինիի կարծիքով Ռուսիայի և Ֆրանսիայի բարեկամութիւնը ծագել է իրերի դրութիւնից, որովհետև Անգլիան պատրաստւում էր միանալու եռապետական դաշնակցութեան հետ։ Այս առթիւ Բրիւսէլի «Nord» լրագիրը նկատում է, որ մարկիզ դի-Ռուդինին չատ անաչառ և սառնասիրտ կերպով է խօսել այս մասին, ուղղակի ասելով, որ պետութիւնների խմբուելու մէջ նա դէպի եւրոպական խաղաղութիւնը սպառնալիք չէ տեսնում։

ՇՈՒԵԴԻԱ ԵՒ ՆՈՐՎԵԳԻԱ.—Լրագիրներն իրենց կառավարութեան ուշադրութիւնն են հրաւիրում այն հանգամանքի վրայ, որ Ռուսիան վերջերքս ձգտում է տիրելու Նորվեգիայի հիւսիսային մասին, որովհետև նրա առեւտրի համար չատ օգտակար է այնտեղի բաց նաւամատոյցը, որ երբէք չէ սառում։ Ներկայումս Ունգարիայում գտնուող Նորվեգիացի յայտնի բանաստեղծ և հրապարակախօս Բիերնստերնէ Բիօրնսոնը, այդ մասին խօսակցութիւն ունենալով ունգարական պատգամաւոր Կրչնաւի հետ, ասել է, որ ինքը բոլորովին չէ հաւատում, թէ Ռուսիան այդպիսի նպատակ ունենայ։ Եթէ Ռուսիայի առեւտրի համար յիրաւի չսառող նաւամատոյց է հարկաւոր Նորվեգիայում, թող նա դաշնագիր հաստատէ Նորվեգիայի հետ, որ այդպիսի դէպքում ռուսաց ապրանքներին ազատութեամբ ազատ տրանզիտ կը տայ ամբողջ Նորվեգիայի մէջ։ Ինչ վերաբերում է զինուորական նաւամատոյցին, Ռուսիան դժուար թէ այդ մասին մտածելիս լինի, որովհետև այդ դէպքում նա անպատճառ կընդհարուէր Անգլիայի հետ։

ԹԻՒՐՔԻԱ.—Կ. Պոլսից «Post» լրագրին հաղորդում են. «Թուրքաց ֆինանսների մինիստր Յակոբ փաշան չաբաթ երեկոյեան ընկաւ ձիուց և կէս ժամից վախճանուեց. նրա տեղ նշանակուած է Աւխթայիլ էֆէնդի Փորթուգալը, երկրագործական բանկի կառավարիչը։

—Ինչպէս երևում է, այն լուրերը, թէ Քեամիլ փաշան մասնակից է եղել սուլթանի դէմ սարքուած դաւադրութեանը, կամ սխալ են կամ սուտ տարածել են նրա թշնամիները, որպէս զի նրա վարկը ձգեն սուլթանի աչքում։ Բանը նրանումն է, որ Քեամիլ փաշան ոչ թէ միայն այլ ևս չէ բանտարկուած, այլ և այս օրերս նրա մօտ է գնացել սուլթանի սենեկապետներից մէկը և յայտնել է նրան, որ սուլթանը ի նշան դէպի նա տածած իր առանձին հաճութեան, նրան ցմահ շնորհում է 300,000 պիաստր թոշակ, որ մօտ 30,000 րուբլի է անում։ Հաղորդում են նոյնպէս, որ Օսման Ղազի փաշան, որին յանձնարարուած էր Քեամիլ փաշայի խիստ քննութեան ենթարկել, իր զեկուցման մէջ նախկին մեծ վեզիրի մասին կատարելապէս լաւ կարծիք է յայտնել։

ՉԻՆԱՍՏԱՆ.—Իրերի դրութիւնը Չինաստանում սպառնում է առաջնակարգ քաղաքական խնդիր դառնալ։ Լոնդոնի «Standard» լրագիրը նկատում է, որ ի նկատի ունենալով պետութիւնների մօտերքս չինացոց կայսրին արած յայտարարութիւնները, ծովային ցոյցեր պէտք է լինին, եթէ չինական կառավարութիւնը չի կատարել նրանց պահանջները։ Ծովային ցոյցերի համար արդէն ամեն միջոց ձեռք է առնուած և միայն դեռ ևս այն խնդիրը չէ վճռուած, թէ պետութիւններից որը պէտք է այդ բանում նախաձեռնող հանդիսանայ։ Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Անգլիան մեծ շահեր ունի Չինաստանում, ծովային ցոյցեր անելու նախաձեռնութիւնը պատկանում է անգլիական նաւատորմիղին, բայց այդ խնդիրը ուրիչ կերպ կարող է վճռուել, այն է այդ նախաձեռնութիւնը տալով Պեկինի գերմանական դեսպանին, որպէս այնտեղի քաղաքական ներկայացուցիչների աւագագոյնին։ Ի վերջոյ «Standard»-ը ասում է, որ չինական կառավարութեան ներկայ վարմունքն ինչպիսի հանգամանքներում էլ որ պայմանաւորուելիս լինի, այնուամենայնիւ անհրաժեշտ է համոզուն կերպով միջոցներ ձեռք առնել և ստիպել չինացիներին, որ յարգեն միջազգային դաշնագրերը։

ՉԻԼԻ.—Հեռագիրը հաղորդեց, որ Չիլիի հասարակապետութեան նախագահ Բալմասեդան անձնասպանութիւն է գործել։ Այդ մասին լրագիրները հետևեալն են գրում։ Չիլիի հասարակապետութեան նախկին նախագահը օգոստոսի 29-ին հեռացաւ Սան-Եագոյից, յոյս ունենալով, որ կարող է փախչել Չիլիի սահմաններից։ Սակայն համոզուելով, որ բոլոր ճանապարհների վրայ անցնողները խիստ հսկողութեան են ենթարկուած, սեպտեմբերի 2-ին նա ետ դարձաւ Սան-Եագօ և այն ժամանակուանից թաքնուած էր Արգենտինեան դեսպանատան մէջ։ Արգենտինեան հասարակապետութեան դեսպան Ուրիբուրուն Բալմասեդայի անձնասպանութիւն գործելուց յետոյ անմիջապէս այդ մասին յայտնեց Չիլիի ներկայ կառավարութեանը։ Գեներալ Բալմասեդան դեռ 45 տարեկան չկար։ Նա ծագում էր չիլիական հարուստ և նշանաւոր տոհմից, ուսումնասիրած էր իրաւաբանական գիտութիւնները և խիստ հմուտ փաստաբան էր։ Չնայելով որ նա կրթուած էր կղերական ոգով, այնուամենայնիւ ազատամիտ սկզբունքների էր հետևում և այդ սկզբունքներն էլ նրան կորստի մատնեցին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մօդի ընդդիմադիրներ.—Թէև կանադացիները լաւ ծանօթ են եւրոպական մօդերին և և սովորութիւններին, բայց այժմ նրանք այդ մասին լսել անգամ չեն ուզում։ Այս օրերս նրանք ահագին ապստամբութիւն սարքեցին կորսեթների դէմ։ Կինգստոնից հեռագիրը հաղորդում է, որ Օնտարիայում և նրան մօտիկ գտնուած Սուդենհամ գիւղում խիստ յուզում է տիրում. կանայք հրապարակում հակակորսեթային ժողովի են հաւաքուել, ահագին խարոյկներ են վառել, հանել են իրենց եւրոպական հագուստները և կորսեթները և բոլորը կրակն են ածել, երգելով. «մենք ուզում ենք մնանել այնպէս, ինչպէս Աստուած ստեղծել է մեզ»։

Գլադստոնը ձայնախօս մեքենայի մէջ.—Անգլիայում քաղաքական համագումարների օտարոտի ձևով պրոպագանդա է լինելու չուտով։ Մի ինչ-որ հնարագէտ, Գլադստոնի եռանդուն կողմնակիցներից մէկը, ձայնախօսի պէս մի մեքենայ է հընարել և այդ մեքենայի մէջ առել է Գլադստոնի քաղաքական ամենալաւ ճառերից մի քանիսը։ Այդ միջոցով Գլադստոնի ճառերը կը քարոզուին ամբողջ Անգլիայում։ Նրա ազատամիտ մտքերը իւրաքանչիւր փողոցի սեփականութիւն կը դառնան։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՍՍԻՍԱՏԻ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՋԻՍՏԱՊՈՒ, 18 սեպտեմբերի.— Այստեղից հացահատիկների և գետնախնձորի՝ Կազանի նահանգի սահմաններից դուրս արտահանելն արգելուած է։ Գներն իջնում են։

ԲՐԻՍՍԷԼ.—Այսօր առաւօտեան գեներալ Բուլանժէն տիկին Բոննեմի գերեզմանի վրայ ատրճանակը ականջի մէջ արձակելով, անձնասպանութիւն գործեց։

ՊԱՐԻԶ.—Գեներալ Բուլանժէի անձնասպանութեան լուրը հաստատւում է. մահը հետևել է ըստ պէտքաբար։

ԼՈՆԴՈՆ.—Գուատեմալում ապստամբութիւն է ծագել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 սեպտեմբերի.— Այսօր տեղի ունեցաւ Ի. Ա. Գոնչարովի թաղումը։ Բազմաթիւ պսակներով ծածկուած հասարակ կաղնեայ դագաղի ետևից հազարաւոր մարդ էր գնում. կային մամուլի ներկայացուցիչներ, ուսանող սերունդ. եկեղեցում ներկայ էին Մեծ Իշխան Կոստանդին Կոստանդինովիչը, գիտութիւնների ճեմարանի կողմից պատգամաւորութիւն, վարչական հաստատութիւնների ներկայացուցիչներ։ Գերեզմանի վրայ բանաստեղծութիւն կարդաց կազլովսկի։

Այսօր գիտութիւնների ճեմարանը միտրապոլիտ Մակարի անուան պրեմիաներ տուեց՝ 1,500 ր. գեներալ-մայոր Մասկովսկուն «Русская армія въ семилѣтнюю войну» շարադրութեան համար, 1500 ր. պրոֆեսոր Տաուբլդարովին «Химическая технологія сельскохозяйственныхъ пордуктовъ» շար. համար, 1.000 ր. սենատական Սեմեոնովին «Освобожденіе крестьянъ» շար. համար. 1000-ական ռուբլի. պրոֆեսոր Դիւվերնային բուլղարերէն բառարանի համար և պրոֆեսոր Լիւդովիչին «Начало Католической реакціи» շարադրութեան համար։

ԲՐԻՍՍԷԼ.—Բուլանժէի անձնասպանութեան մասին հետևեալ մանրամասնութիւններն են հաղորդում. գերեզմանատանը աշխատող չորս բանուորներ ժամը 11ին տեսան Բուլանժէին, որը գնում էր դէպի տիկին Բոննեմենի գերեզմանը, իսկ ժամը 12—ին նոյն բանուորները հրաձգութեան ձայն լսեցին։ Գերեզմանի մօտ վազելով, նրանք համոզուեցին, որ Բուլանժէն իւր վրայ ատրճանակ է արձակել և գնդակը քունքը մտնելով ծակել է գանգը. գերեզմանատան կառավարիչը, որին անյապաղ իմաց արին եղելութիւնը, ատրճանակը հանեց Բուլանժէի ջղաձգաբար սեղմուած ձեռքից և կարգադրեց մարմինը գերեզմանատան դամբարանը տանելու, այնտեղից մարմինը Մոնդրէյէ փողոցի հիւրանոցը տարուեց։ Բուլանժէի մարմինը դրուած է անկողնի վրայ. քունքի վերքը ծածկուած է սպիտակ փաթաթանով. դէմքի գծագրութիւնը չի փոխուել։ Ժողովուրդի ահագին բազմութիւն է կանգնած հիւրանոցի առաջ, տաք տաք խօսելով պատահած դէպքի մասին։ Բուլանժէն, ըստ երևոյթին, մի քանի ժամանակ մտածում էր անձնասպանութիւն գործելու. այդ ենթադրութիւնը հաստատում է այն փաստը, որ նա տիկին Բոննեմենի գերեզմանի վրայ պսակ է դրել հետևեալ մակագրութեամբ. «մինչև շուտ տեսութիւն, Մարգարիտ»։

ԼՈՆԴՈՆ.—Պարլամենտի անդամ Ջեմս-ուլամ Լորդերը արտաքին գործերի մինիստրի օգնական է նշանակուած սըր Ջեմս Փերգիւսոնի տեղ։

ՎԵՆՆԱ.—Ռայխենբերգից, Զեխշալում, հեռագրում են, որ կէս գիշերին Ռայխենբերգի մօտ դինամիտի բռնկում են առաջարկել երկաթուղու կամրջի վրայ, որով պէտք է անցնէր աւստրիական կայսերական գնացքը։ Կամուրջի և երկաթգծերի մի մասը մասամբ փչացած են, դժբախտութիւն չէ պատահել։ Կայսերական գնացքը կարողացաւ աջողութեամբ անցնել բռնկումից վնասուած տեղով։ Հաւանական է՝ որ բռնկումն առաջացրել են անարխիստները։

ՎԵՆՆԱ, 20 սեպտեմբերի.—Երկաթուղու կամուրջը դինամիտով վնասելու մասին եղած պաշտօնական հետախուզութիւնից երևում է, որ այդ առաջուց մտածած չար դիտաւորութիւն չի եղել, այլ լոկ յիմար վարմունք, որով ուզեցել են խանգարել Ռայխենբերգում կայսրի համար պատրաստուող հանդիսաւոր ընդունելութիւնը։

Պատասխանատու խմբ. Մ. ԱԲԵՂԵԱՆ
Հրատարակիչ՝ Ս. ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

I Անդրկովկասեան երկաթուղի

Գոյժէ Թիֆլիս գալիս է

Բաթումից,	աստ.	11 ժ.	8 ր ե
Բաղուից,	«	7 ժ. 40	ր. առ
Բաթումից,	մար. ապ.	8 ժ. —	ր. առ
Գանձակից,	»	8 ժ. 20	ր. առ

Գոյժէ Թիֆլիսից գնում է

Բաթում,	պուտային.	8 ժ. 40	ր. առ.
Բաղու,	»	12 ժ. 8	ր. գի.
Բաթում,	մար. ապ. գն.	3 ժ. 10	ր. ց.
Գանձակ,	«	ժ 45	ր. առ.

II Անդրկասպեան երկաթուղի

Ուզուն-Ագայից գնում է 6 ժ. 40 ր. ե
Ուզուն-Ագա գալիս է 7 ժ. 48 ր. առ.
Ուզուն-Ագայից գնացքը գնում է և գալիս երեքշաբթի և շաբաթ օրերը։
Սամարղանդ գնացքը գալիս է և գնում է ուրբաթ և երեքշաբթի օրերը։

I Բոստով-Վլադիկաւկազի երկաթ.

Վլադիկաւկազից գնում է	9 ժ. 30 ր. առ
Բոստով գալիս է	8 ժ. 48 ր. առ
Բոստովից գնում է	7 ժ. 28 ր. ցեր.

ՆԱՒԱՑԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

I Սև ծովի վրայ

Բաթումից գնում են՝
Հինգշաբթի՝ երեկոյեան 4 ժամին ուղիղ գծով, Նովորոսսիյսկ և Սուխում։
Շաբաթ՝ երեկոյեան 8 ժամին, ուղիղ գծով, բոլոր նաւահանգիստներով։
Երկուշաբթի՝ երեկոյեան 7 ժ. արտասահմանեան նաւահանգիստներ. Կ. Պոլիս։

Բաթում գալիս են
Երեքշաբթի՝ կէս օրին մօտ, Օդեսայից, ուղիղ գծով։
Ուրբաթ՝ առաւօտեան Օդեսայից ուղիղ գծով, Կերչի և Նովորոսիյսկի վրայով։
Կիրակի՝ առաւօտեան Կ. Պոլսից

Փոթիից Բաթում գնում են՝
Հինգշաբթի՝ առաւօտեան ժ. 9-ին։
Շաբաթ՝ առաւօտեան ժ. 9-ին։
Երեքշաբթի՝ երեկոյեան։

Փոթիից Բաթում գալիս են՝
Ուրբաթ և կիրակի կէս օրից յետոյ ժ. 2-ի մօտերը։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

КАКАО
БЕЗЪ МАСЛА
ВЫСШАГО КАЧЕСТВА
МИНУТНОЕ
ПРИГОТОВЛЕНІЕ
ФАБРИКИ
С.СІУ и К°
36—31

ԴԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԵՍԻ ՔՆՔՇՈՒԹԻՒՆ

ԹԽՏԵՆՈՒ ԿՐԷՄ

Կոմէթէ Ա. ԷՆԳԼՈՒՆԴԻ

Այս դեղը զործ է ածւում պպերի, դեղնութեան, բծերի, խոցերի, խորշոմների, անողորկութեան և այլն դէմ. թարմացնում է և պատանեկական թարմութիւն է տալիս։ Ամեն մի սրուակի գինն է 1 ռուբ., ճանապարհածախքով—2ռուբ., երկու սրուակինը ճանապարհածախքով—3 ռուբլի։

Կեղծիքից զերծ մնալու համար խնդրում ենք պահանջել ամեն մի դրոշմանիշի վրայ Ա. Էնգլունդի ստորագրութիւնը կարմիր թանաքով գրած, և Պետերբուրգի կոսմետիքական լաբորատորիայի մարկը։ Գլխաւոր պահեստն է՝ Պետերբուրգ, Պետերբուրգի կոսմետիքական լաբորատորիա Ա. Էնգլունդի, Լիտէյնայա,

(M.) 10—1

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
1891.

Կիրակի, սեպտեմբերի 22-ին հայ դերասանական մշտական խումբ ԲԱՆԿԱՑԻՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Կը ներկայացնէ

I
ԴՈՆ ԳՐԻԳՈՐԻՕ
Կոմ. 3 արար., թարգ. Թուրեանի.

II
ՁԱՒԵՇՏ
Տ. Սիրանոյշը կ'երգէ, պ. Պետրոսեանը կը կարդայ.

III
ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉԸ ԴԺՈԽՔՈՒՄ.
Ֆարս-Կոմեդիա 1 արար., հեղ Գ. Սունդուկեանցի։

Կը մասնակցեն տ. տ. Սիրանոյշ, Մելիքեան, Փառանձեմ, օր. Վարդուհի պ. պ. Թուրեան, Տէր-Դաւթեան, Աղայեան, վրոյը, Պ. Սարգսեան, Աբրահամեան, Յարութիւնեան և Մամիկոնեան

Սկիզբն է ճիշտ ժամը 8-ին

(211) 1—1

ԲԺԻՇԿ Ա. ՄԻՐԶԱՅԵԱՆՑԸ
ԳԱՆԶԱԿՈՒՄ

Տեղափոխուելով Իւան Լիսիչեանցի տունը, Մէյդանի փողոցում, շարունակում է ընդունել հիւանդներին

Ամէնայն օր
Առաւօտեան 8-ից մինչև 10 ժամը
Երեկոյեան 7-ից մինչև 8 ժամը։

(210) 10—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յայտնում է հասարակութեանը, որ քաղաքային կեդրոնական բուժարանում (Մուխրանսկայա փողոց, տուն Կուզնեցովի) և նրա բաժանմունքներում (Հալաբարում, Ռոզովայա հրապարակ, տուն Դենգելշտէյնի և Բաննիեա վորոտա—Էֆենջեանցի տանը) կատարւում է թէ չափահասների և թէ երեխաների համար ԾԱՂԿԻ ՊԱՏՈՒԱՍՏՈՒՄՆ ամեն օր առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը։

(208) 3—3

Вышелъ въ свѣтъ и разосланъ подписчикамъ ДВАДЦАТЬ СЕДЬМОЙ выпускъ

„НАСТОЛЬНАГО ЭНЦИКЛОПЕДИЧЕСКАГО СЛОВАРЯ"

(Глинки—Гончаровъ) съ 14 портретами и 1 рис. въ текстѣ, изданія товарищества А. Гарбель и К°., въ Москвѣ.
Цѣна отдѣльнаго выпуска 40 к. на лучшей и 30 к. на обыкновенной бумагѣ.
Продается во всѣхъ книжныхъ магазинахъ Россіи
ПОДПИСКА ПРОДОЛЖАЕТСЯ исключительно въ конторѣ изданія—Москва, Тверская, Гнездниковскій пер., д. Мартыновой.

(Խ.) 2—2.

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

յայտնում է սրանով, որ ընկերութեանս 1891 թուի անդամները կարող են ստանալ Կենդրոնական գրավաճառանոցից ընկերութեան հետևեալ հրատարակութիւնները.
1) Տոլստոյ—Աստուած գիտէ արդարն մեղաւորը։
2) Վալտնէր—Հաւատարիմ Սավիարին։
3) Պեստալոցի—Լինհարդ և Դերտրուդ։
4) Նալ և Դամայանտի։
Ռոզընհարն—Նաւի փոքրաւորը։
6) Սպիրի՝ Ուռենց Յովսէփ։
(խմբ) 10—10

BATEAUX A VAPEUR FRANÇAIS NPAQUET C^E.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր նաւագնացութիւն Մարսէլից Բաթում երկու շաբաթը մի անգամ չորեքշաբթի օրերը, սկսած յունուարի 21-ից և Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս։

ԲԱԹՈՒՄԻՑ ՆՈՒՄ ԵՆ

Զորեք.	11/23	սեպտեմբերի	չոգենաւ	«Անատոլիա» կապիտան	Դարբիզ
»	25/7	սեպտեմբերի հոկտեմբերի	»	«Արենիա» »	Թիբալ
»	9/21	հոկտեմբերի նոյեմբերի	»	«Սիրկասիա» »	Բոչէլ
»	23/7	հոկտեմբերի	»	«Անատոլիա» »	Դարբիզ

և այդպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրուայ։

Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան տոմսակները սովորական գնից զիջումով։

Տեղեկութիւնների և բեռների համար ճանապարհորդները թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին—Բաթումում ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Նաքերեժնայա, Թիֆլիսում՝ պ. Վիկտոր դ'Արնօնի, Մի-ջի փողոց, գեներ. Տէր Աստուածատուրեանի նախկին տուն։

Բաղուում՝ պ. Սամուէլ Դիլդարեանցին, Կոլիւբեակինսկաեայ հրապարակում։ Նովորոսսիյսկում՝ պ. Լուի Բենոյին։

(90) 12—4

Дозволено цензурою. Тифлисъ, 20-го Сентября 1891 г. Տպարան Կաւկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ Гол. пр., домъ Читахова